Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն – 39

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 24-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

ՆԱԽԱԳԱՀՈՒՄ ԷՐ՝ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ ԹՈՎՄԱՍ ՇԱՀՎԵՐԴՅԱՆԸ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ ԷՐ՝ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՔԱՐՏՈՒՂԱՐ ՍԱՄՎԵԼ ՍԱՀԱԿՅԱՆԸ

Ավագանու 15 անդամներից նիստին մասնակցում էին՝ Ա. Անդրեասյանը, Տ. Գալստյանը, Ա. Զաքարյանը, Վ. Մկրտչյանը, Ա. Սարգսյանը, Ս. Շուխյանը, Բ. Վարդանյանը, Հ. Վարդանյանը:

Նիստին մասնակցում էին նաև աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Շ. Վահանյանը, աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետի պաշտոնակատար Հ. Բաղդասարյանը:

1. Հաստատվում է նիստի հետևյալ

Օ Ր Ա Կ Ա Ր Գ Ը

2. Աշտարակ համայնքի 2020 թվականի տարեկան բյուջեում փոփոխություն կատարելու մասին:

/Զեկուցող՝ Շ. Վահանյան/

3. Աշտարակ համայնքի 2020 թվականի տարեկան բյուջեի երրորդ եռամսյակի կատարողականի մասին:

/Զեկուցող՝ Շ. Վահանյան/

4. Աշտարակ համայնքի 2020թ. բյուջեի պահուստային ֆոնդից հատկացում կատարելու մասին:

/Զեկուցող՝ Շ. Վահանյան/

5. Աշտարակ համայնքին սեփականության իրավունքով պատկանող գույքն անհատույց օգտագործման իրավունքով <<Աշտարակի կոմունալ ծառայություն>> ՀՈԱԿ-ին տրամադրելու մասին:

/Զեկուցող՝ Շ. Վահանյան/

6. <<Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի հաստիքացուցակն ու պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> Աշտարակ համայնքի ավագանու 11.12.2019թ. N 75-Ա որոշման մեջ լրացումներ կատարելու մասին:

/Զեկուցող՝ Ս. Սահակյան/

7. Հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

/Զեկուցող՝ Հ. Բաղդասարյան/

8. Համայնքային սեփականություն հանդիսացող, որպես քաղաքացու սեփականություն փոխանցված բնակավայրերի նշանակության հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու մասին:

/Զեկուցող՝ Հ. Բաղդասարյան/

9. Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող որոշ հողամասեր աճուրդ-վաճառքով օտարելու թույլտվություն տալու մասին:

/Զեկուցող՝ Հ. Բաղդասարյան/

10. Համայնքային սեփականություն հանդիսացող, որպես քաղաքացու սեփականություն փոխանցված որոշ հողամասեր համայնքային սեփականություն ճանաչելու և աճուրդ-վաճառքով օտարելու մասին:

/Զեկուցող՝ Հ. Բաղդասարյան/

11. Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն համարվող հողամասը կառուցապատման իրավունքով տրամադրելու թույլտվություն տալու մասին:

/Զեկուցող՝ Հ. Բաղդասարյան/

12. Համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նշանակության հողամասը ուղղակի վաճառքով օտարելու մասին:

/Զեկուցող՝ Հ. Բաղդասարյան/

8 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն - 2 - Աշտարակ համայնքի 2020 թվականի տարեկան բյուջեում փոփոխություն կատարելու մասին

Հարցը ներկայացրեց աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Շանթ Վահանյանը և առաջարկեց փոփոխություններ կատարել Աշտարակ համայնքի 2020 թվականի տարեկան բյուջեում:

Զեկուցողը մասնավորապես նշեց, հաշվի առնելով 2020 թվականի ընթացքում առաջ եկած մարտահրավերները, անհրաժեշտություն է առաջացել բյուջեում կատարել վերաբաշխումներ:

8 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 3 - Աշտարակ համայնքի 2020 թվականի տարեկան բյուջեի երրորդ եռամսյակի կատարողականի մասին

Հարցը ներկայացրեց աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Շանթ Վահանյանը և առաջարկեց ի գիտություն ընդունել Աշտարակ համայնքի 2020 թվականի տարեկան բյուջեի երրորդ եռամսյակի եկամուտների և ծախսերի կատարողականը:

Զեկուցողին հարցեր ուղղեց Ա. Սարգսյանը, որոնց Շ. Վահանյանի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

8 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 4 - *Աշտարակ համայնքի 2020թ. բյուջեի պահուստային ֆոնդից հատկացում կատարելու մասին*

Զեկուցումով հանդես եկավ աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Շանթ Վահանյանը և առաջարկեց համաձայնություն տալ Աշտարակ համայնքի 2020թ. բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդի տասնվեց միլիոն ՀՀ դրամն ուղղել բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման 05-1-1 բնագավառին՝ Աշտարակ քաղաքի աղբահանության ոլորտի աշխատանքների ֆինանսավորման համար:

Զեկուցողին հարցեր ուղղեց Ա. Սարգսյանը, որոնց Շ. Վահանյանի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

8 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 5 - *Աշտարակ համայնքին սեփականության իրավունքով պատկանող գույքն անհատույց օգտագործման իրավունքով <<Աշտարակի կոմունալ ծառայություն>> ՀՈԱԿ-ին տրամադրելու մասին*

Հարցը ներկայացրեց աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Շանթ Վահանյանը և առաջարկեց համաձայնություն տալ Աշտարակ համայնքին սեփականության իրավունքով պատկանող երեսուն միլիոն ութ հարյուր հազար ՀՀ դրամ հաշվեկշռային ընդհանուր արժեքով աղբատար և երեսունութ միլիոն մեկ հարյուր հազար ՀՀ դրամ հաշվեկշռային ընդհանուր արժեքով բազմաֆունկցիոնալ ճանապարհային ավտոմեքենաներն անհատույց օգտագործման իրավունքով <<Աշտարակի կոմունալ ծառայություն>> ՀՈԱԿ-ին տրամադրելուն:

Զեկուցողին հարցեր ուղղեցին Վ. Մկրտչյանը և Ա. Սարգսյանը, որոնց Շ. Վահանյանի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

8 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն - 6 - *<<Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի հաստիքացուցակն ու պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> Աշտարակ համայնքի ավագանու 11.12.2019թ. N 75-Ա որոշման մեջ լրացումներ կատարելու մասին*

Զեկուցումով հանդես եկավ աշխատակազմի քարտուղար Ս. Սահակյանը և հաշվի առնելով կատարված օրենսդրական փոփոխությունները, առաջարկեց համաձայնություն

տալ լրացումներ կատարել Աշտարակ համայնքի ավագանու 11.12.2019թ. <<Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի հաստիքացուցակն ու պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> N 75-Ա որոշման մեջ և ավելացնել <<3.1. համայնքի ղեկավարի տեղակալ>> հաստիքը:

Զեկուցողին հարցեր ուղղեց Ա. Սարգսյանը, որոնց համայնքի ղեկավար Թ. Շահվերդյանի և Ս. Սահակյանի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

8 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն - 7 - Հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին

Զեկուցումով հանդես եկավ աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետի պաշտոնակատար Հ. Բաղդասարյանը և առաջարկեց հավանություն տալ 02-001-0841-0024 ծածկագրով 4.7825հա և 02-001-0410-0206 ծածկագրով 2.2233հա գյուղատնտեսական նշանակության հողատարածքների նպատակային նշանակությունը արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր նպատակային նշանակության, իսկ գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական փոփոխելու վերաբերյալ առաջարկությանը:

8 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 8 - Համայնքային սեփականություն հանդիսացող, որպես քաղաքացու սեփականություն փոխանցված բնակավայրերի նշանակության հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու մասին

Զեկուցումով հանդես եկավ աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետի պաշտոնակատար Հ. Բաղդասարյանը և առաջարկեց համաձայնություն տալ Աշտարակ քաղաքի վարչական տարածքում գտնվող քաղաքացու սեփականություն փոխանցված բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասը համայնքային սեփականություն ճանաչելուն:

Զեկուցողին հարցեր ուղղեց Տ. Գալստյանը, որոնց Հ. Բաղդասարյանի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

8 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 9 - Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող որոշ հողամասեր աճուրդ-վաճառքով օտարելու թույլտվություն տալու մասին

Զեկուցումով հանդես եկավ աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետի պաշտոնակատար Հ. Բաղդասարյանը և առաջարկեց համաձայնություն տալ

համայնքային սեփականության որոշ հողամասեր աճուրդ-վաճառքով օտարելուն և միաժամանակ սահմանել մեկնարկային գին:

Քննարկվող հարցի շուրջ լրացուցիչ պարզաբանումներ ներկայացրեց համայնքի ղեկավար Թ. Շահվերդյանը:

8 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

* Լ Ս Ե Ց Ի Ն – 10* - *Համայնքային սեփականություն հանդիսացող, որպես քաղաքացու սեփականություն փոխանցված որոշ հողամասեր համայնքային սեփականություն ճանաչելու և աճուրդ-վաճառքով օտարելու մասին*

Հարցը ներկայացրեց աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետի պաշտոնակատար Հ. Բաղդասարյանը և առաջարկեց համաձայնություն տալ Աշտարակ քաղաքի վարչական տարածքում գտնվող քաղաքացու սեփականություն փոխանցված որոշ հողամասեր համայնքային սեփականություն ճանաչելուն և աճուրդ-վաճառով օտարելուն: Միաժամանակ, առաջարկեց սահմանել մեկնարկային գին՝ կադաստրային արժեքի 100 տոկոսի չափով:

Զեկուցողին հարցեր ուղղեց Տ. Գալստյանը, որոնց Հ. Բաղդասարյանի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

8 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 11 - *Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն համարվող հողամասը կառուցապատման իրավունքով տրամադրելու թույլտվություն տալու մասին*

Հարցը ներկայացրեց աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետի պաշտոնակատար Հ. Բաղդասարյանը և առաջարկեց համաձայնություն տալ Աշտարակի համայնքային սեփականություն համարվող, Արտակի փողոցում գտնվող հողամասը մրցութային կարգով տրամադրել կառուցապատման իրավունքով, միաժամանակ սահմանել մեկնարկային գին:

8 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 12 - *Համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նշանակության հողամասը ուղղակի վաճառքով օտարելու մասին*

Օրակարգի վերջին հարցը ևս ներկայացրեց աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետի պաշտոնակատար Հ. Բաղդասարյանը և առաջարկեց համաձայնություն տալ Աշտարակ քաղաքի Տ. Մեծի փողոց 102/2 հասցեում գտնվող 103քմ

բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասը ուղղակի վաճառքով, կադաստրային արժեքի 100 տոկոսի չափով օտարել կից ընդլայնվող Տ. Մեծի 102 հասցեում գտնվող հողամասի սեփականատիրոջը:

8 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Օրակարգի հարցերը սպառված են:

Ավագանին աշխատանքներն ավարտեց 2020 թվականի նոյեմբերի 24-ին:

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ	**ՍԱՄՎԵԼ ՇՈՒԽՅԱՆ**
ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ	**ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ**
ԱԶԱՏ ՁԱՔԱՐՅԱՆ	**ԲԱԲԿԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ**
ՎԱՀԱԳՆ ՄԿՐՏՉՅԱՆ	**ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

ԱՐՁԱՆԱԳՐԵՑ՝
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՍԱՄՎԵԼ ՍԱՀԱԿՅԱՆԸ